**ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԵՎ**

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ՝ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետև՝ հայկական կողմ) և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Զբոսաշրջության ազգային ադմինիստրացիան (այսուհետև՝ չինական կողմ) համաձայնեցին Չինաստանի զբոսաշրջիկների՝ դեպի Հայաստան խմբային ճանապարհորդությունը դյուրացնելու մասին: Երկու Կողմերը համաձայնություն եկան հետևյալ կետերի շուրջ.

## ՀՈԴՎԱԾ I

1. Չինական կողմը Չինաստանում նշանակում է զբոսաշրջային գործակալություններ (այսուհետ՝ ՉԶԱԱ նշանակած զբոսաշրջային գործակալություններ), որոնց Չինաստանի զբոսաշրջության ազգային ադմինիստրացիան (ՉԶԱԱ) լիազորել է՝ իրականացնելու Չինաստանի քաղաքացիների համար արտագնա ճանապարհորդություն և կազմակերպելու Չինաստանի զբոսաշրջիկների արտագնա խմբային ճանապարհորդություն դեպի Հայաստան:
2. Հայկական կողմը նշանակում կամ առաջարկում է զբոսաշրջային գործակալություններ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և հետաքրքրված են Չինաստանից զբոսաշրջիկների խմբային ճանապարհորդություն կազմակերպելու հարցում (այսուհետ՝ հայկական ներգնա զբոսաշրջային օպերատորներ):
3. Կողմերը, գրավոր և էլեկտրոնային ձևաչափով, փոխադարձաբար հաստատում են ՉԶԱԱ նշանակած զբոսաշրջային գործակալությունների և հայկական ներգնա զբոսաշրջային օպերատորների ցանկերը, որոնցում կներառվեն ընկերությունների անվանումները, հասցեները, հեռախոսահամարները, ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, կոնտակտային անձանց տվյալները և այլ տվյալներ: Յուրաքանչյուր Կողմի ցանկում փոփոխությունների

դեպքում, կիսամյակը մեկ անգամ Կողմերն այդ մասին գրավոր և էլեկտրոնային ձևաչափով տեղեկացնում են միմյանց:

4. Կողմերը դիմում են ՉԶԱԱ նշանակած զբոսաշրջային գործակալություններին և հայկական ներգնա զբոսաշրջային օպերատորներին՝ ընտրելու գործընկերներ մյուս Կողմի ցանկից և կնքելու համապատասխան պայմանագիր:

## ՀՈԴՎԱԾ II

1. Կողմերը պաշտպանում են խմբերով Հայաստան ճանապարհորդող Չինաստանի քաղաքացիների օրինական իրավունքներն ու շահերը՝ Չինաստանի և Հայաստանի համապատասխան օրենքներին և կանոնակարգերին համապատասխան՝ միջազգային իրավունքի շրջանակներում: Եթե զբոսաշրջային գործակալությունը մեղավոր է ճանաչվում, ապա համապատասխան տեղեկատվությունը փոխանցվում է մյուս Կողմին: Կողմերը համապատասխանաբար պատասխանատվության են ենթարկում իրենց գործակալություններին:
2. Կողմերն ուղիներ են փնտրում զբոսաշրջության անվտանգության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման և համակարգման մեխանիզմի ձևավորման ուղղությամբ և խթանում են համագործակցությունը զբոսաշրջության ապահովագրության և արտակարգ իրավիճակներին արձագանքման ուղղությամբ: Հայկական կողմը և իր զբոսաշրջային հաստատությունները կամ հայկական ներգնա զբոսաշրջային օպերատորները ստեղծում են հեռախոսային թեժ գիծ Չինաստանի զբոսաշրջիկներին խորհրդատվություն և արտակարգ իրավիճակներում օգնություն տրամադրելու նպատակով: Միևնույն ժամանակ, հայկական կողմը կպահանջի, որպեսզի հայկական ներգնա զբոսաշրջային օպերատորները ապահովեն ՉԶԱԱ լիազորած զբոսաշրջային գործակալություններին համապատասխան տեղեկատվությամբ, մասնավորապես՝ դեպի Հայաստան և Հայաստանի տարածքում ճանապարհորդության պայմանների, անվտանգության կանոնների, Չինաստանի զբոսաշրջիկների համար անհրաժեշտ ծառայությունների և դրանց գների ու այլնի վերաբերյալ, որոնք կարող են նպաստել զբոսաշրջիկների օրինական իրավունքների պաշտպանությանը:

## ՀՈԴՎԱԾ III

1. Չինական կողմի պահանջով՝ Չինաստանի զբոսաշրջային խմբերը Հայաստան ճանապարհորդության ընթացքում Չինաստանի և Հայաստանի սահմաններ մուտք են գործում և սահմաններից դուրս են գալիս խմբերով: ՉԶԱԱ լիազորած զբոսաշրջային գործակալությունները պետք է ապահովեն յուրաքանչյուր խմբում զբոսաշրջային խմբի ղեկավարի առկայությունը:
2. Հայկական կողմը պահանջում է, որպեսզի հայկական ներգնա զբոսաշրջային օպերատորները նշանակեն զբոսավար յուրաքանչյուր խմբի համար, ով, խորհրդակցելով Չինաստանի զբոսաշրջային խմբի ղեկավարի հետ, կօգնի լուծել ցանկացած խնդիր, որը կարող է առաջանալ Չինաստանի զբոսաշրջիկների մոտ Հայաստանի տարածքում ճանապարհորդության ամբողջ ընթացքում:

## ՀՈԴՎԱԾ IV

1. Չինական կողմը պահանջում է, որպեսզի ՉԶԱԱ լիազորած զբոսաշրջային գործակալությունները նշանակեն գործակալ, որը կունենա ՉԶԱԱ կողմից տրամադրված նույնականացման քարտեր, որոնք կծառայեն որպես անցագիր Չինաստանում Հայաստանի դեսպանություն կամ հյուպատոսություններ մուտք գործելու համար՝ Չինաստանի զբոսաշրջիկների վիզաների հարցով դիմելու համար: Չինական կողմը, գրանցման նպատակով, Հայաստանի դեսպանությանն է տրամադրում յուրաքանչյուր նշանակված զբոսաշրջային գործակալության կողմից լիազորված իր ներկայացուցիչների և գործակալների մասին համապատասխան տեղեկատվություն:
2. ՉԶԱԱ լիազորած զբոսաշրջային գործակալություններն իրենց կողմից կազմակերպված չինական զբոսաշրջային խմբերի վիզաների համար դիմելիս ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝ պաշտոնական նամակ՝ ստորագրված նշանակված զբոսաշրջային գործակալության կողմից լիազորված ներկայացուցիչների կողմից, զբոսաշրջային խմբի անդամների անվանացանկը, դիմումի ձևաթղթերը՝ լրացված զբոսաշրջային խմբի բոլոր անդամների կողմից, խմբի անդամների լուսանկարները և անձնագրերը՝ առնվազն 6 ամսվա վավերականության ժամկետով:
3. Չինաստանում Հայաստանի դեսպանությունը կամ հյուպատոսությունները լավագույն ջանքերն են գործադրում չինական զբոսաշրջային խմբերի վիզաների համար դիմելու ընթացակարգերի պարզեցման և վիզաների դիմումների համար՝

ՉԶԱԱ նշանակած զբոսաշրջային գործակալությունների կողմից լիազորված գործակալների մուտքը դեսպանություն կամ հյուպատոսություններ դյուրացնելու ուղղությամբ:

4. Չինաստանում Հայաստանի դեսպանությունը կամ հյուպատոսությունները չեն ընդունի Հայաստան վիզաների դիմումներ՝ ներկայացված ՉԶԱԱ նշանակած զբոսաշրջային գործակալություններից բացի այլ չինական զբոսաշրջային գործակալության, կազմակերպության կամ անհատի կողմից, կամ չինական զբոսաշրջային խմբերի անունից հանդես եկող Չինաստանում գտնվող Հայաստանի կամ այլ երկրների որևէ կազմակերպության կամ անհատի կողմից:

## ՀՈԴՎԱԾ V

Չինաստանից Հայաստան զբոսաշրջային խմբերի ճանապարհորդության սահուն իրականացումն ապահովելու նպատակով՝ Կողմերի իրավասու մարմինները ժամանակին փոխանակում են տեղեկատվություն և տվյալներ ու սերտորեն աշխատում են՝ Չինաստանից Հայաստան զբոսաշրջային խմբերի կառավարման միջոցառումների բարելավման ուղղությամբ:

## ՀՈԴՎԱԾ VI

Չինաստանից Հայաստան զբոսաշրջային խմբերի ճանապարհորդության գործընթացը մեկնարկում է Կողմերի կողմից համապատասխան նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո:

## ՀՈԴՎԱԾ VII

Կողմերը լավագույն ջանքերն են գործադրում լուծելու ցանկացած այլ խնդիր, որը կարող է ծագել սույն Փոխըմբռնման հուշագրին համապատասխան նախաձեռնված ճանապարհորդության հետ կապված աշխատանքների ընթացքում:

## ՀՈԴՎԱԾ VIII

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման ամսաթվից: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին: Հուշագիրը դադարում է կիրառվել ծանուցումն ուղարկելու ամսաթվից 3 ամիս հետո: Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողության դադարեցումը ազդեցություն չի ունենում արդեն իսկ ստորագրված՝ գործարար համագործակցության վերաբերյալ որևէ պայմանագրի վրա: Սույն Փոխըմբռնման հուշագրում կարող են փոփոխություններ կատարվել երկկողմ գրավոր համաձայնությամբ:

Սույն Փոխըմբռնման հուշագիրը ստորագրված է Պեկինում 2014 թվականի հուլիսի 15-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերենով, չինարենով և անգլերենով, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում, գերակայում է անգլերեն տեքստը:

Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարության կողմից

Արմեն Սարգսյան
Չինաստանի Ժողովրդական
Հանրապետությունում Հայաստանի
Հանրապետության դեսպան

Չինաստանի Ժողովրդական
Հանրապետության Զբոսաշրջության
ազգային ադմինիստրացիայի կողմից

Շաո Ցիվեյ
Չինաստանի Ժողովրդական
Հանրապետության Զբոսաշրջության
ազգային ադմինիստրացիայի նախագահ

# MEMORANDUM OF UNDERSTANDING
# BETWEEN THE MINISTRY OF ECONOMY
# OF THE REPUBLIC OF ARMENIA
# AND THE NATIONAL TOURISM ADMINISTRATION
# OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA
# ON THE FACILITAION OF GROUP TRAVEL
# BY CHINESE TOURISTS TO THE REPUBLIC OF ARMENIA

The Ministry of Economy of the Republic of Armenia (hereinafter referred to as "the Armenian Side") and the National Tourism Administration of the People's Republic of China (hereinafter referred to as "the Chinese Side") have agreed on the Facilitation of Group Travel by Chinese Tourists to Armenia. Both Sides have reached the following points:

## ARTICLE I

1. The Chinese Side shall designate the travel agencies in China (hereinafter referred to as "the CNTA-designated travel agencies"), which have been authorized by China National Tourism Administration (CNTA) to operate outbound travel business for Chinese citizens, to organize the outbound group travel of Chinese tourists to Armenia.

2. The Armenian Side shall designate or recommend the travel agencies that are in operation according to the Armenian laws and regulations，and are interested in arranging travel of Chinese tourist groups (hereinafter referred to as the "the Armenian inbound tour operators"), to organize the group travel of Chinese tourists to Armenia.

3. Both Sides shall confirm to each other, in writing and in electronic form, the list of the CNTA-designated travel agencies and the Armenian inbound tour operators, which shall include their company names, addresses, telephone numbers, fax numbers, email addresses and contact persons, etc. In case of any change in the list of either

side, every half year the side that makes the change should inform the other side in writing and in electronic form.

4. Both Sides request the CNTA-designated travel agencies and the Armenian inbound tour operators to choose their business partners from the list of the other side, and sign contracts with each other.

**ARTICLE II**

1. Both Sides shall protect the legitimate rights and interests of the Chinese citizens travelling to Armenia in tourist groups according to the relevant laws and regulations of China and Armenia within the scope of international laws. If a travel agency is found guilty, the relevant information shall be communicated to the other Side. Both Sides shall punish their agencies in question respectively.

2. Both Sides shall explore ways to establish a tourism safety information communication and coordination mechanism and promote cooperation on tourism emergency response and tourism insurance. The Armenian Side and its tourism institutions or the Armenian inbound tour operators shall set up telephone hotlines for consultation and emergency assistance to Chinese tourists. In the meantime, the Armenian Side shall request the Armenian inbound tour operators to make relevant information available to the CNTA-designated travel agencies, in particular regarding travel conditions to and within Armenia, safety instructions, important services for Chinese tourists and their prices and other information that can help to protect the tourists' legitimate rights.

**ARTICLE III**

1. The Chinese Side requests that Chinese tourist groups shall enter and leave the Chinese and Armenian territory in groups when they travel to Armenia. The CNTA-designated travel agencies must provide a tour leader to each group.

2. The Armenian Side shall request the Armenian inbound tour operators to assign a tour guide for each group, who will help, through mutual consultation with the Chinese tour leader, to solve any problem that may confront Chinese tourists during the whole trip in Armenia.

## ARTICLE IV

1. The Chinese Side shall request every CNTA-designated travel agency to appoint couriers, who bear ID cards issued by CNTA as a pass for his or her entry into the Embassy or Consulates of Armenia in China, to apply for visas for the Chinese tourist groups. The Chinese Side shall provide the relevant information of the representatives as well as the couriers authorized by each designated travel agency to the Embassy of Armenia for record.

2. The CNTA-designated travel agencies in dealing with visa applications for the Chinese tourist groups organized by them, shall submit the following documents: an official letter signed by the authorized representatives from the designated travel agency, a name list of the tour group, application forms completed by all the members of the tour group, face photographs of applicants and passports valid for at least 6 months.

3. The Embassy or Consulates of Armenia in China shall do its best to simplify the visa application procedure for the Chinese tourist groups and provide convenience for those couriers of the Chinese designated travel agencies in entering the Embassy or Consulates for visa application.

4. The Embassy or Consulates of Armenia in China shall not accept visa application for Chinese tourist groups to Armenia by any Chinese travel agency, unit or individual other than the Chinese designated travel agencies; or submitted on behalf of Chinese tourist groups, by any organization or individual of Armenia and other countries based in China.

## ARTICLE V

In order to ensure the sound operation of Chinese tourist groups travelling to Armenia, the competent authorities on both sides shall exchange information and data timely, and work closely together to improve management measures of the Chinese tourist groups to Armenia.

## ARTICLE VI

The business of group travel to Armenia by Chinese tourists shall start as soon as both sides complete the relevant preparation.

## ARTICLE VII

Both Sides shall do their best to solve any other problem that may arise in the course of the travel activities undertaken according to this Memorandum of Understanding.

## ARTICLE VIII

The present Memorandum of Understanding shall enter into force as of the date of signature. Each side may discontinue its participation in this Memorandum of Understanding by giving a written notice to the other side. This Memorandum of Understanding will cease to apply 3 months after the date of sending such notification. The discontinuation of the Memorandum of Understanding shall not affect the implementation of any business cooperation contracts that had already been signed. Both Sides may amend this Memorandum of Understanding upon their written mutual consent.

This Memorandum of Understanding is signed at Beijing on the 15th of July, 2014, in two original copies both in Armenian, Chinese and English languages, all texts being equally authentic. In the event of any divergence of interpretation, the English text shall prevail.

| For the Ministry of Economy of the Republic of Armenia | For the National Tourism Administration of the People's Republic of China |
|---|---|
|  |  |
| **Armen Sargsyan** | **Shao Qiwei** |
| **Ambassador of the Republic of Armenia to the People's Republic of China** | **Chairman of the National Tourism Administration of the People's Republic of China** |

# 亚美尼亚共和国经济部
# 和
# 中华人民共和国国家旅游局
# 关于中国旅游团队赴亚美尼亚共和国旅游实施方案的谅解备忘录

亚美尼亚共和国经济部(以下称“亚方”) 和中华人民共和国国家旅游局(以下称“中方”)为促进中国游客赴亚美尼亚旅游，就中国旅游团队赴亚美尼亚旅游实施方案达成谅解如下：

第一条

一、中方确定由经其许可经营中国公民出境旅游业务的旅行社（以下称“中方组团社”）承办组织中国旅游团队赴亚美尼亚旅游的业务。

二、亚方指定或推荐按照亚美尼亚法律法规经营、符合标准，且对接待中国旅游团队业务感兴趣的旅行社（以下简称“亚方接待社”）承办在亚美尼亚境内接待中国旅游团队的业务。

三、双方应分别以书面和电子形式确认中方组团社和亚方接待社的名单，名单中应包括旅行社名称、地址、电话、传真、电子邮件和联系人等信息。如一方确认的旅行社名单发生变动，应每半年分别以书面和电子形式将所做的变更通知另一方。

四、双方要求各自旅行社在对方指定或推荐的旅行社中寻找合作伙伴，签订业务合作合同。

第二条

一、双方将根据本国法律法规在国际法允许的范围内保护前往亚美尼亚旅游的中国旅游团队游客的合法权利和利益。如发现有关旅行社违规，将及时通报对方。双方将对己方旅行社采取相应处罚措施。

二、双方应探讨建立旅游安全信息沟通协调机制，推动旅游突发事件应急处置以及旅游保险方面合作，亚方及其旅游机构或接待社应为中国游客设立电话热线以提供咨询和救助。亚方应要求其接待社向中方组团社提供相关材料，尤其是赴亚美尼亚旅行及其过程中的旅游条件、安全注意事项以及向中方组团社提供重点旅游服务信息和价格，及可保护游客合法权益的其他信息。

第三条

一、中方要求旅游团以团队的形式出入中国和亚美尼亚国境。中方旅行社必须为每个旅游团配备领队。

二、亚方要求本国接待社为中国旅游团队配备全程导游，与中方领队共同协商，帮助处理在旅游过程中可能出现的任何问题。

第四条

一、中方要求中方组团社指定签证专办员到亚美尼亚驻华使领馆为旅游团申办签证。签证专办员在进入亚美尼亚驻华使领馆时需持有中方发放的签证专办员胸卡。中方将把中方组团社授权代表人和签证专办员的有关材料递交给亚美尼亚驻华大使馆以

便备案。

二、中方组团社在为本社所组织的赴亚美尼亚的旅游团申办签证时，应向亚美尼亚驻华使领馆提供以下材料：具有旅行社授权代表人签名的旅行社公函、旅游团名单、每名旅游者本人填写的签证申请表、每名旅游者的照片、旅游者有效期超过6个月的有效护照。

三、亚美尼亚驻华使领馆应尽量简化中国组团社为旅游团申办签证的手续，并为中方组团社签证专办员进出使领馆提供方便。

四、亚美尼亚驻华使领馆不应接受中方组团社以外的旅行社、单位或个人以及亚美尼亚或其他国家的在华单位、个人代中国旅游团队提出的赴亚美尼亚旅游的签证申请。

第五条

为保证中国旅游团队赴亚美尼亚旅游业务的正常开展，双方有关部门应及时交流信息，沟通情况，密切配合，不断完善管理措施，保证其健康发展。

第六条

中国旅游团队赴亚美尼亚旅游业务将在双方完成必要的准备工作后开始实施。

第七条

双方将通过友好协商解决实施本谅解备忘录组织的旅游活

动中出现的问题。

第八条

本谅解备忘录自签字之日起生效。任何一方可以书面通知另一方终止本谅解备忘录。本谅解备忘录自该通知发出之日起 3 个月后终止。本谅解备忘录的终止不影响双方对已经签订的业务合作合同的执行。本谅解备忘录可经双方书面同意后进行修改。

本谅解备忘录于二〇一四年 7 月 15 日在北京签订，一式两份，每份都用亚美尼亚文、中文和英文写成，三种文本同等作准。如对文本的解释发生分歧，以英文本为准。

| 亚美尼亚共和国经济部<br>代表 | 中华人民共和国国家旅游局<br>代表 |
|---|---|
| 阿尔缅•萨尔基相<br>亚美尼亚共和国<br>驻中华人民共和国大使 | 邵琪伟<br>中华人民共和国国家旅游局<br>局长 |